Երևանի Հակոբ Կարապենցի անվան
թիվ 6 հիմն. դպրոցի
երգչախմբի (V դասարան)
տարեկան ծրագիր (34 ժամ)

Տնօրեն՝ Ս. Վարդանյան
Փոխտնօրեն՝ Ա. Հակոբյան
Երաժշտության ուս.-ուհի՝ Մ. Նազարյան

2022-2023 ուս. տարի

Մանկական երգչախմբի խնդիրներն ու նշանակությունը

Երեխաներին երաժշտարվեստի հետ ծանոթացնելու, այն հասկանալի ու մատչելի դարձնելու լավագույն եղանակը խմբերգային երգեցողությունն է: Մանկական երգչախմբի ու նրա ղեկավարի հիմնական նպատակն է խմբերգային երգեցողություն սովորեցնելը և երեխաների մեջ երաժշտության նկատմամբ սեր արթնացնելն է:

Երգչախմբի աշխատանքների ընթացքում իրականացվում են մի շարք կարևոր հասարակական, քաղաքական և դաստիարակչական խնդիրներ: Երգը նպաստում է խորացնելու և իմաստավորելու երեխաների սերը հայրենիքի, իր ժողովրդի ու ազգի նկատմամբ: Երգը դրվատում է հարազատ բնաշխարհի գեղեցկությունը, հայրենասիրությունը և ընկերասիրությունը:

Ընդհանուր նպատակներն ու խնդիրները.

- ձևավորել և զարգացնել խմբովի միաձայն, երկձայն և եռաձայն երգեցողության կարողություններն ու հմտությունները
- երեխայի երաժշտական դաստիարակության հիմքում դնել ազգային երաժշտությունը, չբացառելով նաև այլ ժողովուրդների և դասական կոմպոզիտորների ստեղծագործությունները
- պահպանել և զարգացնել մանկական երգչային ձայնը
- երեխաների համախմբում համակիրների ու բարեկամների համերաշխ կոլեկտիվում

Ակնկալվող վերջնարդյունքները

Ծրագրի ավարտին աշակերտը կկարողանա՝

- Երգել /մենակ և խմբով/ մանկական, ժողովրդական , դասական տարբեր ոճի երգեր, խմբերգեր և կոմպոզիտորական երգեր՝ ճիշտ կեցվածքով և շնչառությամբ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով, արտահայտիչ, անսամբլային զգացողությամբ, հետևելով խմբավարի շարժումներին:
- Կարժևորի հայ ազգային և դասական կոմպոզիտորների երաժշտությունը, կդառնա նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը:

	Թեմաների անվանումները	Ժամաքանակ
	՛՛Գովք դպրոցին՛՛ (Խոսք՝Գ.Կաթապետյանի, երաժշտությունը՝ Խ.Մարտիրոսյանի)	1ժ.
	՛՛Հայաստան՛՛ (Խոսք՝Վ.Վարդունու, երաժշտությունը՝Ռ. Պետրոսյանի)	2ժ.
	Երգերի կրկնողություն	2ժ.
	''Ճանճը կարագում '' (Խոսք՝ Յու. Սահակյանի, երաժշտությունը՝ Ռ.Պետրոսյանի)	2ժ.
	՛՛Խաղաղ երկինք՛՛(Խոսք՝Ն.Միքայելյանի, երաժշտությունը՝ Խ.Մարտիրոսյանի)	1ժ.
	Երգերի կրկնողություն	2ժ.
	՛՛Դինգ-դոնգ՛՛(Խոսք և երաժշտությունը՝ Ռ.Ամիրխանյանի)	3ժ.
	՛՛Էսօր ուրբաթ է՛՛ (Մշակումը՝Կոմիտասի)	2ժ.
	Երգերի կրկնողություն	1ժ.
	''Պիտի ապրենք'' (Խոսք և երաժշտությունը՝ Էդ.Գյանջումյանի)	2ժ.
	''Մայրիկ''(Խոսք՝ Մ.Սարկոսյանի, երաժշտությունը՝ Էդ. Ալեքսանյանի)	3ժ.
	Երգերի կրկնողություն	2ժ.
	՛՛Նոր Հայաստան՛՛(Խոսք և երաժշտությունը Ս.Լուսիկյանի)	1ժ.
	''В сыром бору тропина''(ռուսական ժողովրդական երգ)	2ժ.
	Երգերի կրկնողություն	2ժ.
	՛՛Հրաժեշտ դպրոցին՛՛(Խոսք՝Ն.Թադևոսյանի, երաժշտությունը՝ Ա. Սաթյանի)	2ժ.
	՛՛Հրազդան՛՛(Խոսք և երաժշտությունը՝ Հ. Զաքարյանի)	1ժ.
	՛՛Vois sur ton chemin՛՛(Խոսք և երաժշտությունը՝ Բ.Կոուլասի)	2ժ.
	Երգերի կրկնողություն	1ժ.